ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-23/26

ք. Երևան «24» «03» 2023թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամը, ի դեմս տնօրեն Նելլի Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել գրքի կազմման և վերջնամշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 4730000 (Չորս միլիոն յոթ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[2] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2,	Հասցեն՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 1 ա
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հեռ.՝ (+37499) 549-690
Հ/Հ 900011032944	էլ. փոստ՝ arm.metod@gmail.com
ՀՎՀՀ 02698732	«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
	Հ/Հ 220003351925000
	ՀՎՀՀ 01563263

Գլխավոր քարտուղար՝

---------- **Հ. Հակոբյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Տնօրեն՝

---------- **Ն. Սարգսյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 1

«24» «03» 2023 թ. կնքված

թիվ ՀՀԿՄՄՆՄԱԾՁԲ-23/26 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության						
		Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Մատուցման	
							Հասցեն	Ժամկետը
1	79971100/4	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-1	**1. Ծառայության անվանումը՝** Այուզան Պետրոսյան, Նունե Պետրոսյան /կազմողներ/, Ռոբերտ Պետրոսյան «Ստեղծագործություններ շեփորի համար» /1-7-րդ դասարաններ/ ուսումնամեթոդական գրականության հրատարակման ծառայություններ **2. Գնվող ծառայության էության համառոտ շարադրանքը՝** Տվյալ ժողովածուն նվիրվում է տաղանդաշատ կոմպոզիտոր Ռոբերտ Պետրոսյանի 90-ամյա հոբելյանին: Կոմպոզիտորի թողած հսկայական ժառանգությունը՝ նրա բազմաբնույթ ստեղծագործությունները միշտ սպասված են, հաճելի և՛ կատարողի, և՛ունկնդրի համար: **3. Ծառայության համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը՝** **3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60x84/8 Ծավալը՝ 19 տպ. մամուլ Տպաքանակ՝ 200 օրինակ **3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 100 գ/քմ Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% **3.3 Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 12 Միջտողային հեռավորությունը 1,5-2 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA (Գաբուզյան) Շապիկը՝ կավճապատ 300գ/քմ	դրամ	1	1700000	ք. Երևան, Տերյան 72, «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ	15.09.2023-15.12.2023

			Տպագրության տեսակը՝ օֆսեթ Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները և ըստ մակետի: **4. Ծառայության որակական ցուցանիշները՝** հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **5. Ծառայության հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը՝** 5.1 Մինչև տպագրությունը կատարողը պարտավոր է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնել հրատարակության մակետը՝ 19 տպագրական մամուլ: Միայն մակետը հաստատվելուց հետո Կատարողը իրավունք ունի սկսել հրատարակման աշխատանքները: 5.2 Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում: 5.3 Մինչև հրատարակումը կատարողը պարտավոր է ձեռնարկի վերաբերյալ ներկայացնել երաշխավորագիր արվեստի կամ մշակույթի մասնագիտական կազմակերպության կողմից: 5.4 Հատուկ նշագրում. ուսումնամեթոդական գրականության գրքի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» և «Հրատարակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ» բառերը: 5.5 Ուսումնամեթոդական գրականության գույքային իրավունքը, համաձայն Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության սեփականությունն է: **Գրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից:**					

2	79971100/5	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-2	**1. Ծառայության անվանումը՝** Սիլվա Մինասյան, Նարինե Սիմոնյան /հեղինակային խումբ/ «Դասական պարի դաշնամուրային նվագակցության օրինակներ» ուսումնամեթոդական գրականության հրատարակման ծառայություններ **2. Գնվող Ծառայության էության համառոտ շարադրանքը՝** Առարկայական ծրագիրը պարուսույցի համար ուղեցույց է ուսուցման ընթացքը ճիշտ և գրագետ կազմակերպելու գործում՝ ապահովելով երեխաների մասնագիտական աստիճանական աճը: **3. Ծառայության համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը՝** **3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60x84/8 Ծավալը՝ 16 տպ. մամուլ Տպաքանակ՝ 160 օրինակ **3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 100գ/քմ Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% **3.3 Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 12 Միջտողային հեռավորությունը 1,5-2 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA (Գաբուզյան) Շապիկը՝ կավճապատ 300գ/քմ Տպագրության տեսակը՝ օֆսեթ Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները և ըստ մակետի: **4. Ծառայության որակական ցուցանիշները՝** հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **5. Ծառայության հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը՝**	դրամ	1	900000	ք. Երևան, Տերյան 72, «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ	15.09.2023-15.12.2023

			5.1 Մինչև տպագրությունը կատարողը պարտավոր է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնել հրատարակության մակետը՝ 16 տպագրական մամուլ: Միայն մակետը հաստատվելուց հետո Կատարողը իրավունք ունի սկսել հրատարակման աշխատանքները: 5.2 Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում: 5.3 Մինչև հրատարակումը կատարողը պարտավոր է ձեռնարկի վերաբերյալ ներկայացնել երաշխավորագիր արվեստի կամ մշակույթի մասնագիտական կազմակերպության կողմից: 5.4 Հատուկ նշագրում. ուսումնամեթոդական գրականության գրքի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» և «Հրատարակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ» բառերը: 5.5 Ուսումնամեթոդական գրականության գույքային իրավունքը, համաձայն Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության սեփականությունն է: **Գրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից:**					
3	79971100/6	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-3	**1. Ծառայության անվանումը՝** Լիլիթ Մարտիրոսյան /կազմող/ Երաժշտական գրականություն /5-րդ դասարանի համար, խմբագրված վերահրատարակում/ ուսումնամեթոդական գրականության հրատարակման ծառայություններ **2.Գնվող Ծառայության էության համառոտ շարադրանքը՝** Դասագիրքը նախատեսված է երաժշտական, արվեստի դպրոցների և այլ մշակութային կրթական հաստատությունների 5-րդ դասարանի աշակերտների համար: Դասագրքում ներկայացված է եվրոպական երաժշտական մշակույթի համայնապատկերը XVI-XIX դդ.-ում: **3. Ծառայության համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը՝** **3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60x84/16 Ծավալը՝ 8,5 տպ. մամուլ	դրամ	**1**	700000	ք. Երևան, Տերյան 72, «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ	15.09.2023- 15.12.2023

			Տպաքանակ՝ 400 օրինակ **3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 80 գ/քմ Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% **3.3 Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 12 Միջտողային հեռավորությունը 1.5-2 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA (Գաբուզյան) Շապիկը՝ կավճապատ 250գ/քմ Տպագրության տեսակը՝ օֆսեթ Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները և ըստ մակետի: **4. Ծառայության որակական ցուցանիշները՝** հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **5. Ծառայության հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը՝** 5.1 Մինչև տպագրությունը կատարողը պարտավոր է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնել հրատարակության մակետը՝ 8,5 տպագրական մամուլ: Միայն մակետը հաստատվելուց հետո Կատարողը իրավունք ունի սկսել հրատարակման աշխատանքները: 5.2 Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում: 5.3 Մինչև հրատարակումը կատարողը պարտավոր է ձեռնարկի վերաբերյալ ներկայացնել երաշխավորագիր արվեստի կամ մշակույթի մասնագիտական կազմակերպության կողմից: 5.4 Հատուկ նշագրում. ուսումնամեթոդական գրականության գրքի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» և					

			«Հրատարակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ» բառերը: 5.5 Ուսումնամեթոդական գրականության գույքային իրավունքը, համաձայն Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության սեփականությունն է: **Գրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից:**					
4	79971100/7	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-4	**1 Ծառայության անվանումը՝** Նոռա Այվազյան, Ստելլա Կարապետյան, Տիգրան Տողրամաջյան/ հեղինակային խումբ/, «Լարային նվագարանների մասնագիտական դասարանների ծրագիր /խմբագրված վերահրատարակում /» ուսումնամեթոդական գրականության հրատարակման ծառայություններ **2. Գնվող Ծառայության էության համառոտ շարադրանքը՝** Ծրագիրը նախատեսված է երաժշտական և արվեստի դպրոցների լարային նվագարանների՝ ջութակ, ալտ և թավջութակ դասավանդող ուսուցիչների, ինչպես մասնագիտական դասարաններում, այնպես էլ որպես երկրորդ գործիք ուսումնառող աշակերտներին ուսուցանելու համար: **3. Ծառայության համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը՝** **3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60x84/16 Ծավալը՝ 8 տպ. մամուլ Տպաքանակ՝ 250 օրինակ **3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 80 գ/քմ Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% **3.3 Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 12 Միջտողային հեռավորությունը 1,5-2 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA (Գաբուզյան) Շապիկը՝ կավճապատ 250գ/քմ Տպագրության տեսակը՝ օֆսեթ Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները և ըստ մակետի: **4. Ծառայության ի որակական ցուցանիշները՝**	դրամ	1	450000	ք. Երևան, Տերյան 72, «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ	15.09.2023- 15.12.2023

			հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **5. Ծառայության հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը՝** 5. Մինչև տպագրությունը կատարողը պարտավոր է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնել հրատարակության մակետը՝ 8 տպագրական մամուլ: Միայն մակետը հաստատվելուց հետո Կատարողը իրավունք ունի սկսել հրատարակաման աշխատանքները: 5.2 Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում: 5.3 Մինչև հրատարակումը կատարողը պարտավոր է ձեռնարկի վերաբերյալ ներկայացնել երաշխավորագիր արվեստի կամ մշակույթի մասնագիտական կազմակերպության կողմից: 5.4 Հատուկ նշագրում. ուսումնամեթոդական գրականության գրքի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» և «Հրատարակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ» բառերը: 5.5 Ուսումնամեթոդական գրականության գույքային իրավունքը, համաձայն Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության սեփականությունն է: **Գրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից:**					
5	79971100/8	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-5	**1 Ծառայության ի անվանումը՝** Դ. Դավթյան, Սամվել Մարտիրոսյան /կազմողներ/, Արվեստի և գեղարվեստի դպրոցների կերպարվեստ առարկայի ծրագիր (գծանկար, գունանկար,ստեղծագործություն, քանդակ և դեկորատիվ կիրառական արվեստ) /խմբագրված վերահրատարակում /	դրամ	1	300000	ք. Երևան, Տերյան 72, «Հայաստան ի ազգային	15.09.2023-15.12.2023

			ուսումնամեթոդական գրականության հրատարակման ծառայություններ **2. Գնվող Ծառայության էության համառոտ շարադրանքը՝** Ծրագիրը նախատեսված է արվեստի և գեղարվեստի դպրոցների ուսուցիչների համար և կոչված է օժանդակելու աշակերտի ներդաշնակ զարգացմանը: **3. Ծառայության համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը՝** **3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 60x84/16 Ծավալը՝ 4 տպ. մամուլ Տպաքանակ՝ 220 օրինակ **3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 80 գ/քմ Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% **3.3 Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 12 Միջտողային հեռավորությունը 1,5-2 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA (Գաբուզյան) Շապիկը՝ կավճապատ 250գ/քմ Տպագրության տեսակը՝ օֆսեթ Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները և ըստ մակետի: **4. Ծառայության որակական ցուցանիշները՝** հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **5. Ծառայության հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը՝** 5.1 Մինչև տպագրությունը կատարողը պարտավոր է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնել հրատարակության մակետը՝ 4 տպագրական մամուլ: Միայն մակետը				գրադարան» ՊՈԱԿ	

			հաստատվելուց հետո Կատարողը իրավունք ունի սկսել հրատարակման աշխատանքները: 5.2 Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում: 5.3 Մինչև հրատարակումը կատարողը պարտավոր է ձեռնարկի վերաբերյալ ներկայացնել երաշխավորագիր արվեստի կամ մշակույթի մասնագիտական կազմակերպության կողմից: 5.4 Հատուկ նշագրում. ուսումնամեթոդական գրականության գրքի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» և «Հրատարակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ» բառերը: 5.5 Ուսումնամեթոդական գրականության գույքային իրավունքը, համաձայն Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության սեփականությունն է: **Գրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից:**					
6	79971100/9	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-6	**1 Ծառայության անվանումը՝** Էլլա Պեպանյան /հեղինակ/ «Կերամիկա» ուսումնամեթոդական գրականության հրատարակման ծառայություններ **2. Գնվող Ծառայության ի էության համառոտ շարադրանքը՝** Դասագիրքը նախատեսված է նախադպրոցական տարիքի և տարրական դպրոցի երեխաների համար՝ մեկ ուսումնական տարում ուսուցանելու համար: Դասագրքում ներկայացված է կիրառական արվեստների տեսակներից առավել հայտնին՝ կերամիկան: Դասագիրքը նախատեսվում է տպագրել գունավոր-նկարազարդ: **3. Ծառայության համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը՝** **3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 70x100/16 Ծավալը՝ 4 տպ. մամուլ Տպաքանակ՝ 200 օրինակ **3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 100 գ/քմ Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90%	դրամ	**1**	680000	ք. Երևան, Տերյան 72, «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ	15.09.2023- 15.12.2023

			3.3 Տեքստի բնութագրիչներ՝ Բուն տեքստի տառաչափը՝ 12 Միջտողային հեռավորությունը 1,5-2 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA (Գաբուզյան) Շապիկը՝ կավճապատ 250գ/քմ Տպագրության տեսակը՝ օֆսեթ, գունավոր Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները և ըստ մակետի: **4. Ծառայության որակական ցուցանիշները՝** հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **5. Ծառայության հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը՝** 5.1 Մինչև տպագրությունը կատարողը պարտավոր է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնել հրատարակության մակետը՝ 4 տպագրական մամուլ: Միայն մակետը հաստատվելուց հետո Կատարողը իրավունք ունի սկսել հրատարակաման աշխատանքները: 5.2 Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում: 5.3 Մինչև հրատարակումը կատարողը պարտավոր է ձեռնարկի վերաբերյալ ներկայացնել երաշխավորագիր արվեստի կամ մշակույթի մասնագիտական կազմակերպության կողմից: 5.4 Հատուկ նշագրում. ուսումնամեթոդական գրականության գրքի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» և «Հրատարակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ» բառերը: 5.5 Ուսումնամեթոդական գրականության գույքային իրավունքը, համաձայն Հեղինակային իրավունքի և					

			հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետության սեփականությունն է: **Գրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից:**					

** 1-ից 6-րդ չափաբաժինների համար՝ ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- **Հ. Հակոբյան**

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- **Ն. Սարգսյան**

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
«24» «03» 2023 թ. կնքված
թիվ ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-23/26 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ 2023թ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79971100/4	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-1	-	-	-	-	-	-	-	-	1700000	1700000	1700000	1700000	1700000
2	79971100/5	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-2	-	-	-	-	-	-	-	-	900000	900000	900000	900000	900000
3	79971100/6	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-3	-	-	-	-	-	-	-	-	700000	700000	700000	700000	700000
4	79971100/7	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-4	-	-	-	-	-	-	-	-	450000	450000	450000	450000	450000
5	79971100/8	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-5	-	-	-	-	-	-	-	-	300000	300000	300000	300000	300000
6	79971100/9	գրքի կազմման և վերջնամշակման ծառայություններ-6	-	-	-	-	-	-	-	-	680000	680000	680000	680000	680000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ **Հ. Հակոբյան**
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____ **Ն. Սարգսյան**
(ստորագրություն) Կ.Տ